



Ն. ՄՈՒՏՍՈՊՈՒԼՈՍ, Կ. ԴԻՄԻՏՐՈԿԱԼԻՍ

ՄՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ¹

(Հայոց Դարձի 1700-ամեակի առթիւ)

Սուրբ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը մեծ տարածում ունի Հայաստանէն դուրս, որովհետև ան սրբացում է նաև Օրթոտոքս եկեղեցիին կողմէ և ճանչցում՝ իբրև Սուրբ Գրիգոր Մեծն Հայքի: Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարքը, որուն հաւաքողը եղած է Ագաթանգեղոս, յունարեւել թարգմանում է. դարուն, արագ կերպով ընդգրկուեցաւ յունական Յայսմավորքին մէջ, Սեպտեմբերի 30-ին: Նոյն օրը կը տօնուին նաև Հռիփսիմեանց կ'յսերը:

«Նկարչութեան Արուեստի Զեռնարկ» գիրքին մէջ, գրում վանական և նկարիչ Դիոնիսոս Ֆուրնայի կողմէ 18-րդ դարու սկիզբը, ինչպէս նաև երկու այլ գրութիւններ 17-րդ դարէն, կը նկարագրեն անոր սրբանկարին առանձնապատկութիւնները, «ծերունի, կարճ և մօրուքը կարճ» բառերով:

Ընդհանրապէս, Սուրբ Գրիգորի սրբանկարները ուսումնասիրում են արդէն քսան տարի առաջ, Սիրարփի Տէր Ներսիսեանի կողմէ, որուն ծանօթ են Յունաստանէն միայն՝ Խալկիդոնի (Chalkéon), որ կը նշանակէ «կաթաւյագործերու», Կոյսի եկեղեցիին որմնանկարը և Փոսիդէի (Phocide) Սուրբ Դուկասի խճանկարը²:

Անկէ ի վեր, Սուրբին և անոր նահատակութեան բազմաթիւ նկարներ յայտնուեցան Յունաստանի մէջ, կենսագրութիւններ՝ ձեռագիրներուն մէջ, բայց մանաւանդ երկուս, որ Յունաստանի բազմաթիւ շրջաններու մէջ,

¹ Սոյն յօդուածը ներկայացում է իբրև դասախօսութիւն 11—17 Սեպտեմբեր, 1985-ին Երևանի մէջ կայացած միջազգային գիտաժողովին, նուիրում Հայ արուեստի:

² S. Der Nersessian, «Les Portraits de Grégoire l'Illuminateur, dans l'Art Byzantin», Byzantion, vol. XXXVI (1909), p. 390.

պահպանում էն անոր մասունքները պարունակող սրբատուփեր՝ յետ-
Բիզանդական արուեստի գործեր: Անոր պաշտամունքին տարածումը Բի-
զանդիոն և բիզանդական Յունաստանի մէջ 10-րդ, 11-րդ և 12-րդ դարե-
րուն, արդէն իսկ հանգամանօրէն ուսումնասիրուած են Սիրարփի Տէր Ներ-
սիսեանի կողմէ: Ըստ հայ մեծ բիզանդագէտին, Հայաստանի առաքեա-
լին ներկայութիւնը Կ. Պոլիս, Ս. Սոֆիայի խճանկարներուն մէջ, որոնք
9-րդ դարուն պատրաստուեցան և անոնց ըրած նախընտրութիւնը բաղ-
դատմամբ ատելի յարգուած և ծանօթ Սուրբերու, անտարակոյս, որ կապ
ունին Բարսեղ Ա. կայսեր արտաշէսեան ծագում ունենալու առասպելներուն
հետ: Կեղծ ցեղաբանութեան մէջ, որ որոշ հեղինակներու կողմէ կը վե-
րագրուի Փոտ պատրիարքին, կ'ըսուի թէ Բարսեղը սերած է Հայոց Տըր-
դատ մեծ թագաւորէն, որ կ'ապրէր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ժամանակ:
Ատելի ուշ շրջանին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի պաշտամունքը կը թուի
հետևանքը ըլլալ հայերու տեղափոխութեան դէպի Յունաստան, փախչելու
թրքական բարբարոսութիւններէն: Կրեւտէի մէջ, ուր փաստաթուղթերէ ծա-
նօթ է հայերու բնակութիւնը, Հռիփսիմէ իգական անունը ծանօթ է իբրև
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին ընկերացող նահատակին անունը: Հռիփսի-
մէ անունը, յունարէն Ռիփսիմէ կամ Ռիփսիմեա և սխալմամբ՝ Ռէփսիմեա,
վերածուած է այսօր Ռէմի-ի և հելլենացած՝ Ռէա, նոյնանալով հին չաստ-
նածուհիի անունին հետ:

Յունաստանի մէջ, մինչև մեր օրերը, Սուրբին ծանօթ դիմանկարները
անոնք էին, որոնք կը գտնուին Խալկէոն, այսինքն՝ կաթալագործերու Կոյսի
եկեղեցին՝ Սալոնիկի մէջ, որուն որմնանկարներու թուականը նշանակուած
է արձանագրութեան մէջ՝ 1028, Փոսիտի Սուրբ Ղուկաս Վանքին մէջ որուն
խճանկարները կը պատկանեն 11-րդ դարուն, Սալոնիկի՝ Սուրբ Նիկողոս
Օրփանոսի եկեղեցիին, որուն որմնանկարները կը վերագրուին պրոֆ. տի-
կին Տսիտորիատոսի կողմէ՝ 14-րդ դարուն և Միստրայի Հոդիդիտրիայի
Աֆենդիկոն (Afendikò) եկեղեցին՝ 14-րդ դարուն: Միստրայի որմնանկա-
րը, անկասկած՝ գեղեցկագոյնը, մի քանի անգամներ հրատարակուած է:
Ըստ պրոֆ. Charles Delvoye-ի, այդ դիմանկարը «կը յայտնէ գոյներու
նրբանշալ գգացականութիւն մը, զոր ունէին Հոդիդիտրիայի (Hodichit-
ria) նկարիչները: Սքանչելի է տեսնել, թէ անոնք ինչպիսի յանդգնու-
թեամբ գործածած են վարդագոյնը արևելեան եկեղեցիի մեծ վարդապե-
տի քահանայական զգեստները նկարելու»:

Այս պահուս, կրնանք ատելցնել Սուրբին ինը առանձին նկարներ, կի-
սանդրի, կէս հասակով կամ ամբողջ հասակով, և անոր մարտիրոսութեան
երեք նկարներ՝ բոլորն ալ նորագիտ: Սուրբին նկարները կը գտնուին.

1) Հրեշտակապետներու եկեղեցին, Մեծն Մեսսայի (Messa) Բու-
լարճի (Boularji) գիղին մէջ, հարաւային Պելոպոնէս (Péloponèse),
որուն խճանկարները, ըստ ոճի, կը վերագրուին 12-րդ դարուն:

2) Սուրբ Աթանասի եկեղեցիին մէջ, Լակոնիայի (Laconie) Ղերակի
(Gheraki) գիղի եկեղեցիին մէջ, որուն որմնանկարները, Moutsopau-
los-ի և Dimitro-Kallis -ի կողմէ թուականագրուած են 1250-ի շուրջ:
Սուրբին դիմանկարը՝ դիմացէն և կիսամարմին, կը գտնուի բեմին հարաւային
պատին վրայ. մէկ ձեռքին ան բռնած է փակ Աւետարան, իսկ միւս ձեռ-
քով ան կ'օրհնէ:

3) Մակեդոնիոյ վերայի Ս. Պարասկիվիի (Paraskévè) եկեղեցիին մէջ,
14-րդ դար:

4) Կիպրոսի Աղիասմատիի (Agiasmati) Ս. Խաչ եկեղեցիին մէջ, որուն խճանկարները, Փիլիպ Կուլի գործ, արձանագրութեան մէջ կը յիշեն 1494 և 1505 թուականները: Սուրբին դիմանկարը, շրջանակի մէջ առնուած կիսանդրի, կը գտնուի Կաթողիկէի ճակատին վրայ:

5) Սալամին կղզիի Ֆանիրոմանի (Phanéroméni) կոյսի կաթողիկէին մէջ, որուն արձանագրութեան մէջ յիշատակուած թուականն է 1735, Գևորգ Մարկոսի և անոր գործատեղիի գործ: Սուրբին նկարը, ոտքի, երեք քառորդով, ունի երկարաձիգ չափեր:

6) Մակեդոնիոյ, Էրատերա Սէլեուցայի (Eratyra Salissa) նընջումն Սուրբ Աստուածածնի եկեղեցիին մէջ, որուն խճանկարները Յովհաննէս անունով նկարիչի գործ են, արձանագրութեան մէջ յիշուած՝ 1763 թուականը:

7) Աստուածաբան Սուրբ Յովհաննէս փոքրիկ մատուռին մէջ, որը մատուռն է Արկոլիդի (Argolide) Աղունթոս (Aghnountos) վանքի գերեզմանատան մէջ, ծանօթ արդէն իսկ հրատարակուած արձանագրութեամբ մը, մատուռին խճանկարները Թէոկլիտոս վանականին 1766-ի գործերն են, նկարները ժողովրդական ոճով են կատարուած, զորի՝ արուեստի որևէ որակէ:

8) Թեսաղոնիկէի Աղմերոսի Անավրայի (Anavra d'Almyros) մէջ գտնուող Սուրբ Պարասկիվիի (Paraskévè) եկեղեցիին մէջ կը գտնուի Սուրբին կիսանդրի նկարը՝ օրհնող ձեռքով (1710):

9) Լատիսսայի Ս. Գևորգ եկեղեցիին մէջ:

Բոլոր խճանկարներուն մէջ, Հայաստանի ատետարանիչը ներկայացուած է եպիսկոպոսական զգեստով, մէկ ձեռքով բռնած Աւետարաններու գիրքը և միւսով՝ ուղղափառ ձևով օրհնող, ըստ եպիսկոպոսներու նկարներուն յատուկ ընդգծուած տիպարով: Ընդհանրապէս, Սուրբը զգեստաւորուած է շուրջառով, ծածկուած մեծ խաչերու եմփորոնով մը, բացի ննջումն Սուրբ Աստուածածնի եկեղեցիէն, Երիթրիա, ուր շուրջառին տեղ կայ Salmatique: Այս եկեղեցիի նկարին մէջ, Սուրբը կը կրէ մակ թագ մը՝ խորհրդանիշ արքայական իր ծագումին: Ինչպէս յայտնի է, Սուրբը արտաշէսեան սերունդէն էր, որդին Անակ իշխանին: Բոլոր այս պատկերները կը փաստեն հայ հայրապետի սրբանկարներու երկար աւանդութիւն մը մեր երկրին մէջ:

Սրբապատկերներու երկար այս աւանդութիւնը ընդհատուած է երկու անգամներ: Թեսաղոնիկէի պղնձագործներու Սուրբ Կոյս եկեղեցիին մէջ, Փոսերի Սուրբ Ղուկաս և Ղերակի Սուրբ Աթանաս եկեղեցիին մէջ, դէմքը երկարաձև է, մօրութիւն՝ կարճ և սրածայր, մինչև նեղ ճակատին իջնող մազերը գանգուր են, գրեթէ նման՝ Պետրոս Առաքելի տիպարին: 14-րդ դարուն, Սուրբերու դիմագիծերը տակաւին վերջնականացած չէին, մինչդեռ յետ-բիզանդական շրջանին, Սուրբը նկարուած է իբրև ճաղատ ծերունի մը,—բացի Էրատիրայի եկեղեցիի պարագայէն,—կարճ և սրածայր մօրութիւնով: Ինչ որ գրուած է Ֆուրնայի Դրոնեսէոսի գիրքու մէջ՝ «Ձեռնարկ Նկարչութեան Արուեստի», ծերունի, կարճ և լայն մօրութիւնով, չի՝ համաձայներ մեզի ծանօթ Սուրբի նկարներով պատկերացումին:

Յունաստանի մէջ, ծանօթ են մեզի մակ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի ճառատակութեան նկարները, երեքն ալ չհրատարակուած: Լակոնեայ Գոմի և Դամեանոսի, այսինքն Anargyres-ներու վանքի կաթողիկէին մէջ, Սուրբին չարչարանքները նկարուած են հարաւային պատին վրայ: Նկար-

ուած արձանագրութեան մը շնորհիւ, որ հրատարակուած է, գիտենք թէ յուշարձանին խճանկարները իրագործուած են Դեմետրէոս Կակավասի ձեռքով, 1621-ին:

17 տարիներ ետք, 1638-ին, Արգաւտիոյ Գինորեայի (Cynurie) Կարիայի (Karya) Սուրբ Նիկողոս վանքի կաթողիկէին մէջ, Գևորգ Մոսխօս նկարիչը, նոյնպէս նկարած է Սուրբին չարչարանքները: Հայ հայրապետը, ներկայացուած է եպիսկոպոսի զգեստներով, ի յառաջագունէ, խոր Վիրապի մը մէջ և կը թուի բարեկամաբար խօսիլ առիծներու հետ: Փոսին վերև կին մը կը թուի լալ, մինչ ձախ ձեռքը կտոր մը հաց կ'երկարէ Սուրբին³:

Ադդիկայի Պանտելիք (Pentelique) լեռան ննջումն Ս. Աստուածածնի վանքի կաթողիկէի արևմտեան պատին վրայ, չարչարանքներու պատկերացումը մի քիչ տարբեր է: Եպիսկոպոսը, որ կը թուի ծնկաչոք ըլլալ, դարձած է դէպի աջ և նայուածքը ուղղած է կնոջ, որ կը գտնուի փոսին վերև, հացի կտոր մը երկարած սուրբին: Սուրբին շուրջ կան երեք վիշապներ, որոնց գլուխները և վիզերը կ'երևին. ասոնք վարքագրութեան թունաւոր օձերն են: Չհրատարակուած և անծանօթ թուականով խճանկարը, կը թուի ըլլալ 17-րդ դարու գործ:

Բոլոր այս պատկերացումներուն մէջ, Սուրբը յիշուած է իբրև *h'erotomartyr*. տիտղոս մը, զոր կը գտնենք նոյնպէս անոր մէկ վարքագրութեան մէջ՝ 11-րդ դարու ձեռագիր, Պրոպոնտոսի Խալքէ կղզիի կոյսի վանքի գրադարանին մէջ և 11-րդ դարու վերջին և 12-րդ դարու *ménologe metagh-rasthique*-ի մէջ, Բրիտանական թանգարան: Նահատակութեան բոլոր պատկերացումները նկարն են չարչարանքի մը, զոր սուրբը կրած է Տըրդատ թագաւորի հրամանով: Իրականութեան մէջ, անոնք նահատակութիւն չեն իրապէս, որովհետև պարտադրուած մահ չեն: Այստեղ անհրաժեշտ է յիշել, որ սուրբի գլխատումի տեսարանը, *menologe*-էն մէջ, սխալմամբ նկարուած է: Սոյն տեսարանը չի' համապատասխաներ ոչ *Metaphrase*-ի պատմութեան և ո'չ միւս վարքերուն, քանզի Սուրբ Գրիգոր մահացած է առանձնութեան մէջ, իր ճգնումի վայրը:

Սուրբի նահատակութեան երեք պատկերացումները 17-րդ դարու կէսերուն, արդիւնք են թերևս նոր վարքի մը տարածումին, որուն խմբագրութենէն օրինակ մը կը գտնուի Թիսաղոնկէի Զակորա գիղապետարանի գրադարանին մէջ: Բացի ասկէ, 15-րդ դարու քիզանդացի գրող Միքայէլ Ապոստոլիս, գրած է մեկնագրութիւն մը՝ նուիրուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքներուն:

Յունաստանի մէջ կը գտնուին արծաթապատ, բրոնզէ կամ փայտէ մի քանի սրբատուփեր, որոնց մէջ կը պահուին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Նշխարները, բոլորն ալ չհրատարակուած: Մեզի ծանօթ սրբատուփերը կը գտնուին.

1) Միտելենիոյ կղզիի մայրաքաղաքի եպիսկոպոսական դղեակի գանձատան մէջ:

³ Տ. Խրիստոսուլոս սխալմամբ կը յիշատակէ Ս. Կոյսը, փոսին վերև: Ան Խոսրովի-դուխուն, Տրդատ թագաւորի քրիստոնէայ քոյրը և կամ, այլ աղբիւրներու համաձայն, այրի մը, որ Հրեշտակի հրամանով, ճաշ կը բերէր Ս. Գրիգորի: Փոսին մէջ չկան առիծներ, այլ հրեշտանման օձեր: Ըստ հայկական աւանդութեան, փոսը գոյութիւն ունի խոր Վիրապի մը մէջ:

2) Մակեդոնիոյ Սերբէսի Ս. Յովհաննէս Մկրտիչ վանքին մէջ: Սրբատուփը կը կրէ 1845 թուականը:

3) Իպերեայ վանքին Ս. Նիկողայոս մատուոին մէջ: Վանքը հիմնուած է 10-րդ դարուն, Վրացիներու կողմէ: Ըստ աւանդութեան, մասունքները նուիրուած են բիզանդական կայսրութեան կողմէ:

4) Աթոս լեռան Խերապոտամի վանքին մէջ: Յետ-բիզանդական շրջանի արծաթեայ մասնաւորատուփը կը պարունակէ Սուրբի զիստի փոքր կտոր մը և ունի երկու յունարէն արձանագրութիւններ, մէկ հայերէն արձանագրութիւն և Ս. Գրիգոր Լուսաւորիչի դիմանկարը, դէմքը և կիսանդրին, ձեռքին բռնած Աւետարաններու գիրքը և միւս ձեռքը՝ օրհնելու շարժումով: Դիմագծին վրայի առաջին արձանագրութիւնը կը գրէ. «վասն փրկութեան հոգւոյ Եփրապոտամի վանքի Գրիգոր վանահօր»: Երկրորդ յունարէն արձանագրութիւնը կը գրէ. «Մեծ Հայոց Սուրբ Գրիգոր»: Գլխու աջ կողմը հայերէն արձանագրութիւնը կը գրէ. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի դէմքն է»: Ըստ աւանդութեան, մասնատուփը նուէր եկած է բիզանդացի կայսրերէն:

5) Աթոս լեռան Գրիգոր վանքին մէջ կը գտնուի Նշխարներու տուփ մը գլուխի ձևով, որ կը պարունակի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի գլուխին փոքր նշխար մը: Մասնատուփը կը կրէ 1845 թուականը⁴:

6) Աթոս լեռան մեծ «լաւրայ»-ին մէջ կան երկու արծաթեայ մասնատուփեր: Առաջինը՝ բերուած Մովսէսեայէն 1848-ին (կամ 1856-ին) Բենեամէն վարդապետի ձեռքով, կը պարունակէ Սուրբ Գրիգորի Սուրբ Գլուխը և կը կրէ 1702 թուականը: Երկրորդը՝ կը պարունակէ Սուրբին ձեռքը և կը կրէ յունարէն արձանագրութիւն. «Մեծ Հայոց Սուրբ Գրիգորի, 1780»: Ըստ վանական աւանդութեան, Սուրբ Գրիգորի Ս. Գլուխը փոխադրած է Մովսէսեայէն աթոսական hieromoine Բենեամին վարդապետը: Գնած է զայն թուրք փայաշէ մը, երբ վանահայրն էր անապատին: Թերևս 1702 թուականի արծաթապատ Սուրբ Գլուխի մասնատուփը Կ. Պոլսոյ եկեղեցիներէն մէկէ մը բերուած է:

Բոլոր մասունքները կը թուին գալ Կ. Պոլսէն: Ինչպէս գրած է Սիրարփի Տէր Ներսիսեան, Կ. Պոլսոյ մէջ կար, թերևս, 5-րդ դարու վերջաւորութեան և 6-րդ դարու սկիզբը եկեղեցի մը, ուր հայ համայնքը կը յարգէր գերեզմանը ազգային իր առաքեալին, որուն նշխարները փոխադրուած էին կայսերական մայրաքաղաք, Զենոն կայսեր ձեռքով:

Նոյն հեղինակը կ'աւելցնէ առասպել մը, քաղուած հայկական աղբիւրներէ, Սուրբ Գրիգորի, Հռիփսիմեանց և Գայանեանց կոյսերու նշխարներու յայտնութեան մասին, Դափնէի Ս. Երրորդութեան պալատին մէջ: Միքայէլ Գ-ի, Թէոդորա թագաւորի և Փոտ պատրիարքի ներկայութեանը յայտնուած պիտի ըլլան մասունքները և այդ լուրը հաղորդուած պիտի ըլլայ աւելի ուշ Աշոտ թագաւորին Բարսեղ կայսեր կողմէ:

Վերջապէս կը յիշենք, թէ ըստ Նովգորոդի Անտոն եպիսկոպոսի, որ Կ. Պոլիս այցելած է 1200-ին, Ս. Սոֆիայի աւանդատան մէջ կը գտնուէր Ս. Գրիգոր Լուսաւորիչի գերեզմանը, սակայն յոյն գիտնական Եկեմիոս Անթոնիադոսը կը կարծէ թէ Անտոնի նկարագրութիւնը ըսել կ'ուզէ պար-

⁴ Յունարէն երկու արձանագրութիւնները. O AGIOS GRIGORIS TIS ARMENIAS EKOSMITHI PARA GERMANOU KE BENEDIKTU TON MEPEXON DIA XIROS IOANOU 1845 KIMISXANA.

զապէս, թէ այստեղ կային Սուրբին մասունքները⁵: Ինչ կը վերաբերի եկեղեցիներուն և մատուռներուն նուիրում Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի անունին, անոնց ամենէն հիներէն մին, որքան գիտենք, կը գտնուի Յովհաննէս Զմշկիկի հիմնած զինանոցի donjon-ին մէջ, մեծ Լաւրայի վանքը, որ կը գտնուի Աթոս լեռան Մանդրակի (Mandraki) կոչումը փոքր նաւահանգիստին մէջ:

Այսօր, այսքան գիտենք Հայոց առաքելի Յունաստանի մէջ տարածումը պաշտամունքի մասին: Սակայն ուսումնասիրութիւնը պիտի շարունակուի:

Ֆրանսերէնէ թարգմանեց ՇԱՀԷ ԱՐՔ. ԱԾԷՄԵԱՆԸ

⁵ Անթոնիադէս կ'աւելցնէ, թէ խաչակիրները գողցած են մասունքները Ս. Սօֆիայի սաւանդատունէն, երբ գրաւեցին քաղաքը:

